

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՈՒՄ.

Ակադեմիկ վ. Մ. Բեխտերեւի*

Իսկ երբ երեխան սկսում է ասել-արտաբերել առանձին բառեր, անհրաժեշտ է նրան սովորեցնել առանձին առարկաների անունների արտաբերումը և աստիճանաբար հարստացնել նրա բառապաշարը, ցոյց տալով և անուանելով զանազան նկարներ և առարկաներ: Յետոյ կարելի է վերցնել մարզու գործողութիւնները արտայայտող նկարների ժողովածու, անուանելով ամեն մի գործողութիւնը առանձին: Իմ փորձից կարող եմ ասել, որ թէ մէկը և թէ միւսը երեխաներին զբաղեցնում է, որոնք դեռ խօսել չեն սովորել: Հէնց որ երեխան մի քիչ բառապաշար ձեռք բերեց, օգտակար է նրան մի հասարակ պարզ երգ սովորեցնել, օրինակ՝ ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում: Երեխաները շատ են սիրում հասարակ մանկական երգեր և հեշտութեամբ էլ սովորում են, որի շնորհիւ միաժամանակ հասնում ենք երկու նպատակի՝ բառապաշարի հարստացումն և գեղարուեստական զգացմունքի զարգացումն: Շատ կարևոր է, որ երեխայի հետ զբաղող անձնաւորութիւնը ինքը տիրապետէ լաւ արտասանութեան և խօսելու կարողութեան, որովհետև երեխան նմանուելով վերցնում է լեզուի դարձուածքները և նախադասութեան կազմութիւնը: Երբ երեխան բաւականին բառեր գիտէ և հասկանում է շրջապատողների խօսակցութիւնը, այն ժամանակ արդէն լեզուի զարգացումը գնում է հէքեաթներ լսելով, ոտանաւորներ սովորելով և այլն: Լեզուի զարգացման և դարձուածքների ըմբռնման համար յատկապէս օգտակար է որ երեխան որ և է բան ինքը պատմէ. այս դէպքում միշտ պէտք է ուղղել նրա լեզուական սխալները: Որքան հնարաւոր է՝ երեխային շուտ պէտք է տալ մայրենի լեզուի օրինակելի կտորներ, օրինակ՝ ընտրովի հէքեաթներ, մանկական ոտանաւորներ և այլն:

Քերականօրէն ճիշտ խօսելը երեխան ձեռք է բերում սովորութի միջոցով և պէտք է տարուի գուզընթացաբար նրա լեզուի կանոնաւոր զարգացման հետ: Դաստիարակները երբէք չպէտք է նմանուին երեխաների անկանոն արտասանութեան և կեղծելով նրանց նման խօսեն: Այս կորստաբեր սովորութիւնը երկար ժամանակ արմատացնում է անկանոն երեխայական լեզուն, ստիպելով երեխային չհոգալ նրա ուղղելու մասին:

*) Տես Արարատ № 6:

Երեխայի դիտողութեան—զննելու կարողութեան զարգացման համար անհրաժեշտ է սկզբում բարդ նկարներ նայելու ժամանակ ցոյց տալ նրան նկարի բոլոր առանձին մասերը, յետոյ կարելի է ցոյց տալ նման նկարներ և մատնանշել նոցա տարբերութիւնը, ապա խնդրել երեխային, որ առաջարկուած նման նկարների վրայ ինքը ցոյց տայ առանձին մասերը և տարբերութիւնները: Դիտելու կարողութեան յետագայ զարգացման համար կարելի է օգտուել անհամաչափ նկարներով, երեխայի ուշքը գրաւելով այդ անհամաչափութիւնների որոշման վրայ (տուն, որի ծխնելոյզը կողքից լինի և այլն):

Յիշողութիւնը կամ տպաւորութիւնների վրայ կենդրոնանալու կարողութիւնը, որի զարգացումը սկսում է ծննդեան առաջին օրերից, կարելի է վարժեցնել լեզուի զարգացումից առաջ, յատկապէս այն շրջանում, երբ երեխան հասկանում է իրեն ուղղած խօսքերը: Այս նպատակով նկարների վրայի զանազան առարկաների և կենդանիների անուններ պէտք է տալ երեխայի մօտ և ապա հարցնել, թէ այս կամ այն իրը, կենդանին որտեղ է գտնւում: Այս տեսակի վարժեցումը աւելի հեշտանում է, երբ լեզուն աւելի է զարգանում: Այդ ժամանակից սկսած մանկանը կարելի է սովորեցնել՝ կարճ հէքեաթներ, կարճ և երեխայական ուղեղին հասկանալի ոտանաւորներ ու երգեր:

Գօմբինատորական և ստեղծագործական գործունէութեան զարգացման համար մօտ 2 տարեկան և նոյն իսկ աւելի վաղ հասակից երեխային պէտք է տալ դունաւոր խորհանարդներ, որոնցից նոքա շէնքեր են կառուցանում և որը շատ է զբաղեցնում փոքրիկներին: Աւելի ուշ, մտակարգող ընդունակութեան զարգացման համար, կարելի է օգտուել այնպիսի խորհանարդներով, որոնց մակերևոյթը ներկայացնում է նկարների մասեր և առաջարկել երեխային նոցա շարել այնպէս, որ ամբողջ նկարներ ստացուեն: Չորս տարեկան հասակից մանուկը կարող է հաշուել սկզբում մինչև 10-ը, ապա աստիճանաբար մինչև 100: Այդ նպատակին կարող է ծառայել և հասարակ գումարման վարժութիւնը, ապա և հանումը:

Ապա պէտք է աշխատել կրթական ձևերով երեխայի մէջ զարգացնել կենդրոնանալու կամ ուշադրութեան ընդունակութիւնը: Նորածինների կենդրոնանալուն նպաստում են օրօրոցից կատած փայլուն և գեղեցիկ իրերը. ապա այդ առարկաները պէտք է կամաց շարժել, որ երեխան հետեւ նրանց իւր հայեացքով:

Աւելի յետոյ ուշադրութեան զարգացման համար կարող են ծառայել և պարզ հնչիւնները, որոնց վրայ մանուկը կենդրոնանում է: Նշանակութիւն ունի նաև երեխայի հասարակ երաժշտական կտորների և երգերի լսելը: Մեր կարծիքով կենդրոնացման

ապագայ զարգացման նպատակում է երեխային հէքեաթներ պատ-
մելը: Այս դէպքում, եթէ երեխան սիրով է լսում, օգտակար է նոյն
հէքեաթի երկու, երեք անգամ կրկնելը: Ուշադրութեան զարգացման
համար օգտակար է նաև հետաքրքիր նկարների դիտելը, որի
ժամանակ մանուկին պէտք է խնդրել, որ նկարի մանրամասնու-
թիւնները ցոյց տայ:

10.

Կարիք չկայ ասելու որ շարժողական գործողութիւնների
զարգացումը, օրինակ՝ ձեռքի լռելիութեամբ շարժողութիւնը, քայլելը,
խօսելը, որոնք նշանակում են ակամայ, անհամակարգ շարժումնե-
րից առանձնացած, նպատակայարմար և համակարգուած շարժում-
ներին անցնելը կապուած են այն հոգեկան գործունէութեան զար-
գացման հետ, որին կամք են անուանում և որը յօգուտ օրէկտիւ
տեղումին ուղղեալի կարելի էր անուանել անհատական կամ անձնա-
կան ներգործականութիւն. սակայն սա զարգանում է, երբ ճշշում
են այս կամ այն ձգտումները, որոնք երբ լրիւ բաւարարութիւն
են ստանում, խանդարում են երեխայի զարգացմանը և առողջու-
թեանը կամ նրա հասակակիցների շահերին:

Այդպիսի դէպքերում երեխային պէտք է աստիճանաբար և
դրականաբար վարժեցնել ինքնասահմանափակման, հեռացնելով
նրանից միաժամանակ այն ճնշող յոյզից, որ այդ դէպքում կա-
րող է հանդէս գալ և ցոյց տալ նրան հասարակութեան մէջ տեղի-
ունեցող փոխադարձ ծառայութեան օրինակներ:

Երեխայի մէջ պէտք է զարգացնել նաև համբերութիւն դէպի
աշխատանքը, միշտ քաջալերելով իւր արած աշխատանքն ու ցոյց
տուած արդիւնքն և հէնց իրեն երեխային: Երեխան լցւում է ա-
ռողջացնող յոյզով, երբ նրա ջանքերը գովում են և այդ ընդհա-
նուր օրգանիզմի համար օգտակար յոյզը պահպանում է նրա մէջ
եռանդը, համբերութիւն է ներշնչում, որը մարդուս յետագայ
կեանքում այնքան մեծ դեր է կատարում:

Համբերութեան հետ միասին պէտք է զարգացնել և հնա-
զանդութիւնը: Երեխան, որպէս մի անօգնական արարած, իւր
գործողութիւնների համար հասակաւորների մէջ օգնականներ է
որոնում և լսում է երբ մէկը կարողանում է ղեկավարել նրա
կամքը: Սակայն երեխայի ինքնուրոյնութեան-ինքնազործունէու-
թեան չնչին զարգացման հետ, այսպէս թէ այնպէս յաճախ պա-
տահում է անհնազանդութիւն, նոյն իսկ մանկական հասակում:
Հէնց առաջին անհնազանդութեան դէպքում պէտք է երեխայի մէջ
առաջացնել զղջման զգացում և յայտնել նրան, որ եթէ այդ
չկատարի դուք հրաժարւում էք ամենուրեք նրան օգնելուց և ձեռ
որդին չէք համարում: Եթէ երեխան զգում է, որ այդ լուրջ է
ասւում, որ նոյն իսկ պատրաստէք կատարելու սպառնալիքը, երբ

մայրը կամ դաստիարակչուհին խնդրում է հեռանալ իրենից և էլ իրեն չգիտնել, երեխան իսկոյն հասկանում է, որ ինքը վատ վարուեց, չհնազանդուելով այն անձնաւորութեան, որից ամբողջապէս կախուած է, որի հետ կապուած է իւր գոյութիւնը և որին ինքը անհափ սիրում է։ Այս միջոցով երեխայի մէջ կարելի է առաջ բերել իւր արարքի զղջման խօսքեր թոթուել, որոնցից իսկոյն պէտք է օգտուել, համեստացնել երեխային, յայտնելով նրան, որ այլ ևս անհնազանդութիւնը չկրկնի։ Ոչինչ, թէ երեխան մի փոքր ճնշող բնաւորութեան յոյզ ունեցաւ։ Այդ յոյզը իւր անհրաժեշտութեամբ շատ մեծ և նրա համար շատ թանկագին բարոյական հետեանքներ կունենայ։ Չղջումը առաջին անգամ ասում է նրա ուղեղին ու սրտին, իր արարքի ուղղակի զնահատման ճանապարհով, թէ ինչո՞ւ և ինչ բանի մէջ վատ վարուեց և այդ կունենայ միշտ աղնուացնող ազդեցութիւն նրա նոր-նոր կազմակերպւող անձնաւորութեան վրայ։

Անհատական ներգործականութեան կամ կամքի զարգացման համար շատ անհրաժեշտ է երեխային սովորեցնել իւր հասակին համապատասխան այս կամ այն պարտականութիւնը կատարել։ Սկզբում երեխային պէտք է սովորեցնել կանոնաւոր լուացուել, բերանը մաքրել և ողողել, քնից առաջ իր շորերը դասաւորել և խաղալիքները կարգի բերել։ Յետոյ կարելի է անցնել աւելի բարդ պարտականութիւններ, օրինակ՝ հոգ տանել ծաղիկների կամ փոքրիկ կենդանիների մասին։ Երեխաներն առհասարակ թանկ են զնահատում, երբ որ և է բան նոցա պատասխանատւութեան է յանձնւում, այդ զրգուում է նոցա եռանդը և աշխատում են յանձնարարութիւնը ճշտութեամբ կատարել։ Եթէ երեխայի հետ կրթւում են և իրենից փոքրերը, այդ դէպքում ցանկալի է նրան յանձնել ժամանակաւորապէս փոքրերի հոգացողութիւնը, ի հարկէ մօր կամ դաստիարակչուհու որոշ հսկողութեան ներքոյ։ Չարմա-նալի է, այդպիսի դէպքերում որքան շուտ երեխաները վիրաւորանք հասցնողից դառնում են ամենահոգատար խնամակալներ։ Իմ չորս տարեկան աղջկան բաւական է ասել, որ իւր փոքրիկ բարեկամը մնում է իրեն խնամքին, որ իսկոյն սկսի հոգ տանել նրա մասին, հսկել նրան և առնել իւր խնամքի տակ։

Ապա անհրաժեշտ է առանձնապէս հոգալ երեխայի ինքնագործունէութեան մասին։ Երեխաները շատ են սիրում մի որ և է բանով զբաղուել և հէնց սրանից կարելի է օգտուել և նոցա մէջ ինքնագործունէութիւն զարգացնել։ Այս տեսակէտից բոլորովին անտեղի է միշտ հետեւել երեխաներին և չթողնել նրանց ոչ մի ինքնուրոյն քայլ անել։ Ընդհանրապէս երեխային յաճախ պէտք է մենակ թողնել, բայց այնպիսի պայմանների մէջ, որ նա որ և է փաստ չկարողանայ հասցնել իւր առողջութեանը։ Այս տեսակէտից

շատ օգտակար է թողնել երեխային, որ ինքը իւր խաղալիքներէ հետ վարուի այնպէս, ինչպէս ուզում է: Իւր խաղալիքներէ շրջանում նա իրեն տէր ու տիրական է գգում և դրա համար այստեղ նա արտայայտում է որքան կարելի է լրիւ ինքնագործունէութիւն: Թող նա այստեղ խաւաքարտեայ գունաւոր աղիւաներից տնակներ, տան միջի սարք ու կարգ, դռներ շինէ և այլն: Այն բոլորից, ինչոր իր ձեռքով է շինել, նա շատ բաւական կլինի, որպէս իւր արտադրածից և այդ ինքնագործունէութիւնը ապագայում էլ կգարգացնի:

Սակայն երեխայի ինքնագործունէութեան զարգացման մէջ անկասկած յատուկ դեր են կատարում խաղերը: Այս իմաստով խաղերի յաջող ընտրութիւնը պէտք է ունենայ մանկավարժական էական նշանակութիւն, որի վրայ վերն արդէն ուշադրութիւն դարձրինք: Հասակի աճման հետ պէտք է հոգ տանել կազմակերպել այնպիսի խաղեր, որոնց մէջ երեխային տրւում է ինքնուրոյն դեր, որտեղ նա պէտք է ցոյց տայ իւր կարողութիւնն ու հնարագիտութիւնը:

Վերջապէս երեխայի մտաւոր ինքնագործունէութեան զարգացման համար ցանկալի է 3—4 տարեկան հասակից նրան ինքնուրոյնաբար հէքեաթներ պատմել սովորեցնել: Այդ ինքնուրոյնութիւնը սկզբում նմանողական կլինի, սակայն հետզհետէ կարելի է նկատել, որ երեխան իւր հէքեաթների բովանդակութեան մէջ նոր նմանութիւններ կրերի. իսկ այդ արդէն նրա մտաւոր ինքնուրոյնութեան սկիզբն է որը պէտք է բոլոր միջոցներով պահպանել և զարգացնել:

11.

Վերջացնելով մանկական հասակի դաստիարակութեան գլխաւոր հիմքերի գիտողութիւնը, չենք կարող չնկատել, որ մանկան դաստիարակութիւնը, ինչպէս և ամեն մի դաստիարակութիւն պէտք է հիմնուի հոգեբանութեան վրայ: Առանց հոգեբանութեան հետ լաւ ծանօթ լինելու արդէօք կարող է խօսք լինել որ և է դաստիարակութեան մասին: Հէնց այս տեսակէտից մանկաբանութիւնը, որպէս կրթութեան մասին մի գիտութիւն, հանդիսանում է հոգեբանութեան գործադրական մասը: Սակայն մանկան հոգեբանութիւնը ինքն ըստ ինքեան նոր սկստող գիտութիւն է, որը շատ հարցերում դեռ ևս սխառեմատիք մշակման կարիք ունի:

Կրթութիւնը, ինչպէս արդէն ասացինք, երբէք չպէտք է լինի ձեւական—շարունական. նա շատ քիչ պիտի գործադրուի ըստ անշուշտ կաղապարի, այլ միշտ պէտք է համապատասխանի սանի հոգու առանձնայատկութիւններին: Այս իսկ պատճառով հոգու ուսումնասիրութիւնը և նորմալ դաստիարակութիւնը միշտ պէտք է

միասին ընթանան և մէկը միւսին լրացնի. այլ կերպ կրթութիւնը բացիոնալ չի լինի և իւր հերթին առանց կրթութեան մանկան հոգու ուսումնասիրութիւնը պակասաւոր կլինի:

Այսպիսով կրթութեան և հոգու ուսումնասիրութեան միացումից օգտուում է ոչ միայն դաստիարակութիւնը այլ և մանկան հոգու ճշգրիտ ուսումնասիրութիւնը: Որ և է օրինակի վրայ դժուար չէ տեսնել, թէ հոգու ուսումնասիրութիւնը ինչ աստիճանի օգնում է կրթութեանը: Ենթադրենք պատահել ենք մի երեխայի, որի հոգու յուզական կողմը չափազանցութեան է հասնում. կրթութեան ջանքը պէտք է լինի ֆիզիքական համապատասխան հոգացողութեամբ հնարաւորութեան սահմաններում թուլացնել կամ հեռացնել այդ չափազանց յուզականութիւնը: Յետագայում մեր գործ դրած միջոցները ազդեցութիւնը կտեսնենք հոգու վրայ, որը ինքն բոտ ինքեան կհարստացնի մեր գիտելիքները զարգացող օրգանիզմի հոգեկան գործունէութեան մասին:

Այս երկու հիմնական հարցի հետ առաջանում են նաև զարգացող օրգանիզմի կանոնաւոր պահեցողութեան և առողջապահութեան հարցերը, այնպէս որ արդէն տեսանք, թէ ինչպիսի սերտ կապ կայ օրգանիզմի սնման և նրա հոգեկան գործունէութիւնների միջև, յատկապէս մանկական հասակում:

Գիտութիւնը չպէտք է սահմանափակուի միայն հոգին ուսումնասիրելու. դաստիարակութեան կամ մանկական հասակի պահեցողութեան և առողջապահութեան հարցերով: Նա պէտք է նպատակ դնի իրեն ուսումնասիրել հոգին և կրթել մարդուն ոչ միայն մինչև զարոցական հասակը, այլ և թէ հնարաւոր է, մինչև չափահասութեան հասնելը: Այսպիսով գիտութիւնը նպատակ ունի մարդու բարոյական և մտաւոր կատարելութեան ճանապարհները որոնելու և այն լաւագոյն իդեալները գտնելուն, որոնք կազմում են մարդկային անձնաւորութեան իսկական զարդաւորները: Եթէ բոյսերի աճելու և ընտանի կենդանիների ընտելացման համար այնքան մեծ աշխատանք ենք գործադրում, աշխատելով նրանցից մարդուն օգտակար ընթացակիցներ ստեղծել, ուրեմն պէտք է տառապնուել որպէսզի մեր բոլոր ջանքերը գործադրենք մարդկային անձնաւորութեան ամենալաւ կրթութիւն տալու և այդ կրթութեան համար գիտական սկզբունքներ մշակելու:

Ներդաշխում կրթութեան գործը յամենայն դէպս աւելի բարձր է կանգնած, քան մեզանում Ռուսաստանում: Գերմանիան ի դուր չէ մշակել Ֆրեօրիկեան դպրոցը, որը հնարաւորութիւն է տալիս դաստիարակութիւնն ու ուսումը սկսել 3—5 տարեկան հասակում, մինչդեռ մեզ մօտ 7—8 տարեկան երեխաները իրենց ժամանակը անց են կացնում փողոցներում, փչանալով հասարակական տաղանքների ազդեցութեան տակ: Վերջապէս արեւմուտքում դաս-

տիարակութեան համար իրեն դաժան դպրոց հանդիսանում է հէնց ինքը կեանքը, որը մեղանում չկայ, կամ չկայ այն չափով, ինչպէս այնտեղ: Յամենայն դէպս մենք եթէ լիովին չենք գիտակցում, գոնէ բնազդաբար զգում ենք կրթական գործի մեծ պակասութիւն: Մեզ մօտ կրթութեան այդ պակասի մասին պէտք է խօսել անդադար, խօսել և չլռել:

Կրթութեան պակասաւորութիւնը արդեօք չի՞ ապացուցւում մեր ամբողջ մասնաւոր և հասարակական կեանքով և նոյն իսկ մեր պատմութեամբ: Դիմացկանութեան և տոկունութեան բացակայութիւնը, թոյլ բնաւորութիւնը, հակումն՝ յուսահատուել հէնց առաջին անյաջող քայլից յետոյ, աշխատանքի մէջ որոշ սխտեմի բացակայութիւն, հակումն զէպի ծուլութիւնն ու պարապութիւնը, հակումն չափազանցութեան ամեն բանում և անհրաժեշտ մոմենտում համերաշխութեան բացակայութիւնը, այս մեր ազգային առանձնայատկութիւնները արդեօք մեր անկանոն ուղղութեամբ տարուած դաստիարակութեան հետեանքները չմն և միթէ՞ այս բոլորը չի արտացոլում մեր մեծ ժողովրդի պատմութեան վրայ: Դժուար թէ մի ուրիշ երկիր կրթուած հասարակութեան մէջ կարողանայ ցոյց տալ այնքան բազմաթիւ բաւարարութիւն չստացած անձնաւորութիւններ, բառիս բուն նշանակութեամբ խեղաթիւրուած և բնական կեանքին անընդունակ, ինչպէս Ռուսաստանը:

Բացի մեր ժողովրդի բարձր խաւերից անհրաժեշտ է հոգ տանել նաև ազգաբնակչութեան աղքատ դասակարգի հասարակական կրթութեան մասին: Դրա համար չպէտք է ինայիլ ոչ միջոց, ոչ ջանք և զէպի այդ հարցը պէտք է զրաւել ամբողջ հասարակութեան ուշադրութիւնը:

Միայն ուղիղ ըմբռնուած և գործադրուած դաստիարակութիւնը հնարաւորութիւն է տալիս լաւագոյն հասարակական իդեալները ոչ միայն պատուաստել, այլ և մարմնացնել կեանքի մէջ, միայն կանոնաւոր կրթութիւնը իրաւունք է տալիս ոչ միայն խօսքով, այլ և գործով յարգելու անձնաւորութեան իրաւունքը, յարգել նրա խղճի պահանջները, յարգել նրա իրաւունքը՝ ուրիշների հետ ընդհանուր հասարակական հարցերի մասին դատելը: Մի խօսքով առանց համապատասխան դաստիարակութեան, անկարելի է նաև հասարակական կեանքի կանոնաւոր զարգացումը: Եւ եթէ մենք—ռուսներս աւելի քան եւրոպայի միւս ազգերը արհամարհում ենք համապատասխան կրթութիւնը, հէնց դրանում, մեր կարծիքով, գտնուում է այն բանի խոր արմատը, որ մենք դեռ ևս չենք մշակել ոչ կանոնաւոր հասարակական կեանք, ոչ լաւ պետականութիւն, մինչդեռ սրանում է գտնուում մեր հայրենիքի երջանկութիւնը և հաստատուն ապագայի գրաւականը:

Ռուս. փոխադր. Ե. Սարգսեան.